ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/97

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոք բերող՝ «Մեգիէլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝ Վ. Վահանյանի
«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 27.11.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը չկայացած համարելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով 27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 46-րդ, 47-րդ և 48-րդ չափաբաժինների գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 27.11.2019թ.-ին: 28.11.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, իսկ 02.12.2019թ.-ին և 09.12.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 09.12.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.12.2019թ.-ին:

2. «Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մեգիէլ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24 ծածկագրով գնման ընթացակարգ: Գնման հարցման հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 27.11.2019թ ժամը 11:00 է: Հայտերի բացման օր է սահմանված 27.11.2019թ, ժամը՝ 11:00: ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24 ծածկագրով գնմանը մասնակցելու նպատակով «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու՝ Ընկերություն) ուսումնասիրելով հրավերը՝ տեխնիկական բնութագրերում արձանագրել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի կարգավորումների հետ:

Հրավերով սահմանված ժամկետում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24 ծածկագրով հրավերի 27-48 չափաբաժինների վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով հարցադրում է ներկայացվել հանձնաժողովին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի «գնումների եւ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացումը:»

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «Գնումների գործընթացը հիմնվում է հետեւյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում եւ նրանց միջեւ մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:

Համաձայն օրենքի 13-րդ հոդվածի «1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ եւ հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման եւ վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաեւ պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված եւ համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաեւ աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի եւ այլ ոչ գնային պայմանների ամբողջական եւ համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաեւ գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների եւ Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաեւ որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին եւ պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:»

Նկատի ունենալով, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24 ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրերում պահանջվող բժշկական պարագաների նկարագրի ձեւակերպումները ներկայացված են այնպիսի չափորոշիչներով, որոնցով կարող են հայտ ներկայացնել կոնկրետ արտադրատեսակ մատակարարող ընկերությունները: Հրավերի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին: Ուստի՝ ընկերությունը հանդես է եկել հարցադրմամբ, սակայն պատվիրատուն պարզաբանում չի տրամադրել:

Հրավերի տեխնիկական բնութագրերում առկա են այնպիսի ձեւակերպումներ որոնք հստակ հղում են անում կոնկրետ ֆիրմային անվանման, էսքիզին, մոդոլին եւ առկա են նույնականացնող այնպիսի չափորոշիչներ որոնց առկայությամբ գնման առարկա կարող է ապահովել հստակ մեկ արտադրող, բացի այդ վկայակոչված չափաբաժիններում ուղղակի նշված է ապրանքի անվանումը, մոդելը:

Օրենսդիրը վերը հիշատակված նորմով իմպերատիվ կանոն է սահմանել, որ «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որեւէ առեւտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին.....»:

Ընկերությունը պատվիրատուին ներկայացրել է հետեւյալ հարցադրումները՝

«Հարգելի հանձնաժողով խնդրում ենք տալ պարզաբանում 27-48 չափաբաժինների մասով: Ըստ Ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերի նշված չափաբաժիններում ներկայացված ապրանքները համապատասխանում են միայն Ethicon (johnson and Johnson) ֆիրմայի ապրանքատեսականիին:

Խնդրում եմ պարզաբանել, նշված սահմանափակումներով հրավեր ներկայացնելն արդյո՞ք չի ապահովում մեկ արտադրողից ապրանքի գնում, պարզաբանել նշելով սահմանափակումների անհրաժեշտությունը եւ նպատակը, քանի որ յուրաքանչյուր արտադրող ունի իր արտադրման յուրահատուկ ձեռագիրը, որը չի կարող ունենալ մեկ այլ արտադրող, սակայն ֆունկցիոնալ առումով թույլ են տալիս հասնել նույն արդյունքին, որին հնարավոր է հասնել հրավերով նախատեսված նշված չափաբաժինների տեխնիկական բնութագրերով:

Խնդրում եմ պարզաբանել, արդյո՞ք համարժեք կդիտարկվի այն ապրանքատեսակները, եթե ապրանքատեսականին ըստ իրենց տեխնիկական բնութագրերի չափորոշիչների չեն համապատասխանի Ձեր կողմից ներկայացված Ethicon (johnson and Johnson) ֆիրմայի ապրանքատեսականիի տեխնիկական չափորոշիչներին, սակայն դրանք ֆունկցիոնալ առումով հնարավորություն են տալիս հասնել այն արդյունքին,

որին հնարավոր է հասնել հրավերով նախատեսված նշված չափաբաժինների տեխնիկական բնութագրերով:»

Վիճարկվող հրավերով մասնակցությունն ըստ էության առաջացնում է մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման 22-րդ կետը սահմանում է, որ «Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ եւ արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:»

Այսպիսով, հրավերի 27-29 չափաբաժիններով պահանջվում է վիրաբուժական իմպլանտներ եւ ի թիվս այլի պահանջվում է, որ այն բաղկացած լինի «50% պրոլենի 5/0 եվ 50% մոնոկրիլի 6/0 թելերից»: Այս պահանջի 50-50 հարաբերակցությունը ապահովում է բացառապես Ethicon ֆիրմայի ապրանքատեսակը:

33-36, 39, 42, 43, 46, 47, 48 չափաբաժիններով պահանջվող վիրաբուժական գործիքները բնութագրող նկարագրությունում կարող է անվանում նշված չէ, բայց դրանցում նշված կոդը (TX 30, TX 60, ապարատների համար, NTLC55, NTLC75 գծային կարող կտրող սարքավորման համար, TLC 75 ապարատի համար) դիպուկ նախանշում է կոնկրետ արտադրող ընկերություն եւ կոնկրետ ապրանքատեսակ, ուստի որեւէ համարժեք ապրանք ներկայացնել հնարավոր չէ, քանի որ այդ կոդով ապրանքատեսակը արտադրվում է Ethicon ֆիրմայի կողմից:

30, 37, 38, 40, 41 չափաբաժիններով պահանջվող վիրաբուժական գործիքների տեխնիկական բնութագրերով պատվիրատուն ներկայացրել է վիրաբուժական գործիքի արտաքին եւ ֆունկցիոնալ նկարագրությունը: Պահանջվող գործիքի արտաքին նկարագրությունը ներկայացված է այնպիսի պահանջներով որոնց հավաքական համադրմամբ արտադրում է բացառապես Ethicon ֆիրման:

Վիճարկվող ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրերը պատվիրատուն ներկայացրել է այնպիսի ձեւակերպումներով եւ պարամետրերով, որոնց հավաքական ամբողջությունը կարող է ապահովել մեկ արտադրողի կողմից եւ օբյեկտիվ իրականության մեջ համարժեք ապրանք ներկայացնելն անհնար է: Պատվիրատուն նշելով «կամ համարժեք» եզրույթը արտաքուստ կարծես թե առաջնորդվել է օրենքի 13-րդ հոդվածով, բայց ներկայացված չափորոշիչները հնարավորություն չեն տալիս համարժեք ապրանքատեսակով մասնակցության հայտ ներկայացնել:

«Մեգիէլ» ՍՊ ընկերությունը պաշտպանության նախարարության կազմակերպած մրցույթներին մասնակցելու նկատառումով, նախկինում եւս ուսումնասիրելով հրավերները, որոնցով պահանջվել են բժշկական պարագաներ, արձանագրել է, որ հրավերներով ներկայացված տեխնիկական բնութագրերի պահանջներին կարող է բավարարել բացառապես Ethicon ֆիրմային արտադրանքը, ինչը խոսում է այն մասին որ խոչընդոտներ, անհնարինություն է ստեղծվում այլ ապրանքատեսակներով մրցույթի մասնակցությունը եւ պատվիրատուի կողմից տարիներ շարունակ գնում է իրականացվում մեկ անձից:

Պատվիրատուն օրենքի շրջանցմամբ հրավեր ներկայացնելով սահմանափակում է հնարավոր հայտատու մասնակիցներին մասնակցելու հայտարարված գնման ընթացակարգին:

Օրենքի 26-րդ հոդվածը սահմանում է գնահատող հանձնաժողովի լիազորությունները, որի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարի հրամանով ձեւավորվում է գնահատող հանձնաժողով, որը՝ պարզաբանումներ է ներկայացնում գնման ընթացակարգի վերաբերյալ.

Մեր կողմից ներկայացված հարցադրումներին պարզաբանում չտրամադրելով ըստ էության պատվիրատուն դրսեւորել է անգործություն եւ չի առաջնորդվել օրենսդրի կողմից իրեն տրված լիազորություններով: Հանձնաժողովի դրսեւորած անգործությունը եւս մեկ անգամ հիմնավորումն է այն բանի, որ հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրերը կազմվել են օրենքի խախտումներով:

Իրավական նորմերի խախտմամբ կազմված եւ ներկայացված հրավերը չի կարող ապահովել գնումների այն ընթացակարգը, որը նախատեսել է օրենսդիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքով եւ դրանց իրականացման համար ընդունված իրավական ակտերով (ՀՀ կառավարության որոշումներ):»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը չկայացած համարելու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24 ծածկագրով 27, 28, 29, 30, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 46, 47, 48 չափաբաժինների գնման ընթացակարգը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» գնման ընթացակարգի 27, 28, 29, 30, 37, 38, 40, 41 չափաբաժինների վերաբերյալ պատվիրատուի՝ որպես այլընտրանք ներկայացրած համարժեք ապրանքների տեխնիկական բնութագրերի վերաբերյալ, Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«27, 28, 29-րդ չափաբաժինների մասով ներկայացված «ErgonEst» ընկերության «Sorbimesh» եւ «Meril» ընկերության «AbsoMesh» ապրաքատեսակները համարժեքորեն չեն

համապատասխանում վիճարկվող չափաբաժինների տխնիկական բնութագրերին, քանի-որ «Sorbimesh» ապրաքատեսակը չունի 15x15 չափ ցանց, ըստ ներկայացված կատալոգի, ցանցի անցքերի չափը 2մմ է, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվում է 3մմ, ցանցի խտությունը 85-90գ/մ2 որից պոլիպրոպիլենը 30գ/մ2, որը կազմում է ամողջ խտության 1/3-ը, իսկ տեխնիկական բնութագրում պահաջվող հարաբերակցությունը կազմվում է ½:

Ներկայացված բրոշյուրում «AbsoMesh» ապրաքատեսակի ճնշման առավելագույն դիմադրությանը 320 է, իսկ հրավերի տեխնիկական բնութագրերով պահանջվում է 450-600, ինչպես նաեւ ցանցի անցքերի չափը 2մմ է, իսկ հրավերի տեխնիկական բնութագրում նշված է 3մմ:

30-րդ չափաբաժնի մասով ներկայացված Teleflex ընկերության «Visistat-35W» ապրանքատեսակը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին: Տեխնիկական բնութագրում նշված՝ սեղմակի արմատի լայնությունը 5.7մմ, սեղմակի բարձրությունը փակված վիճակում 3.9մմ, իսկ «Visistat-35W» ապրանքատեսակի չափորոշիչներն են՝ սեղմակի արմատի լայնությունը 6.5մմ, սեղմակի բարձրությունը փակված վիճակում 4.7մմ է:

37, 38, 40, 41-րդ չափաբաժինների մասով ներկայացված «FrankenMan» ընկերության «Chex surgical staplers» եւ «Meril» ընկերության «Mirus surgical staplers» ապրաքատեսակների բրոշյուրների ուսումնասիրության արդյունքում չենք կարող արձանագրել համընկնումներ: 37, 38, 39 չափաբաժիններով պատվիրատուն տեխնիկական բնութագրով պահանջում է, որպեսզի այդ չափաբաժինների վիրաբուժական գործիքն ունենա ցողունով հանվող տափակեղված գլխիկ, մինչդեռ պատվիրատուի ներկայացրած նյութի ուսումնասիրությունից արձանագրում ենք, որ այդ գլխիկը բոլորովին էլ տափակ չէ, այլ կորաձեւ է:»:

Ի լրումն վերոնշյալի, Ընկերությունը հայտնել է նաև հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված եւ ԳԲՔԱ-ԼՕ-2019/97 համարի ներքո քննվող բողոքի վերաբերյալ եւ մասնավորապես 09.12.2019թ տեղի ունեցած նիստի ընթացքում քննարկման առնչությամբ պատվիրատուի ներկայացուցչի 10.12.2019 թվականին ներկայցրած գրավոր վերլուծությանը մանրամասնորեն չենք անդրադառնում, քանի որ գնահատում ենք անհարկի կրկնություն այն ամենի, ինչն արդեն քննարկվել է սույն բողոքով հրավիրված երկու լսումների ընթացքում:

Այնուամենայնիվ մեկ դիտարկում առ այն, որ 37, 38, 40 եւ 41 չափաբաժիններով չեն նշվել կոնկրետ որեւէ անհամապատասխանություն, ապա՝ բողոքի քննությունն իրականացվում է գրավոր եւ բանավոր ընթացակարգով միաժամանակ, եւ 09.12.2019 թվականին հրավիրված լսման ժամանակ ընկերության ներկայացուցիչը բանավոր հայտնել է, որ վերոհիշյալ չափաբաժինների տեխնիկական բնութագրերով ներկայացված է հետեւյալը «Լարի տրամագիծը ոչ պակաս քան 0,28 մմ, սեղմակի պսակի լայնությունը ոչ ավել քան 4,0 մմ, բաց սեղմակի բարձրությունը ոչ պակաս քան 5,5 մմ, փակ սեղմակի բարձրությունը կարգավորվող 1,0 ից 2,5 մմ: Սեղմակները տիտանային համաձուլվածքից Ti6Al 4V /90%տիտան 6% ալյումի 4% վանադիում/ ՄՌՏ համատեղելի:» եւ պատվիրատուի ներկայացրած այլընտրանքային ապրանքատեսակների վերաբերյալ ներկայացրած բրոշյուրներում նման տեխնիկական բնութագիր չկա եւ առհասարակ որոշակի համընկնումներ էլ առկա չեն:

Ներկայացված հարցադրման վերաբերյալ պատվիրատուն լսման ժամանակ հայտնեց, որ կներկայացվնի համարժեքություն ապահովող այլընտրանքային ապրանքատեսակի օրինակներ:

Հարգելի պարոն Օհանյան կարծում ենք, որ եւս մեկ նիստ նշանակելու անհրաժեշտություն չկա եւ բողոքի վերաբերյալ առկա նյութերն ապահովում են որոշում կայացնելու համար:»:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 28.11.2019թ.-ի գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 27.11.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 03.12.2019թ.-ին թիվ Մ-54153-2019 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24 գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքի մասով (ծածկագիր՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/97, 27.11.2019թ.) տեղեկացնում եմ, որ ներկայացված բողոքը հիմնավորված չէ և բողոքում ներառված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը: Մասնավորապես՝

1. «ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ի կողմից բողոքում նշված այն փաստը, թե ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24 գնման ընթացակարգի շրջանակներում ս.թ. նոյեմբերի 21-ին ժամը 18:18-ին ARMEPS համակարգի միջոցով ներկայացված պարզաբանման հարցմանը գնահատող հանձնաժողովի կողմից պարզաբանում չի տրվել, չի համապատասխանում իրականությանը, քանի որ նշված հարցադրմանը գնահատող հանձնաժողովը սահմանված կարգով և սահմանված ժամկետներում տրամադրել է պատասխան նույն ARMEPS համակարգի միջոցով: Տրամադրված պատասխանը հրապարակված է ARMEPS համակարգում, ինչպես նաև gnumner.am կայքում, և ունի հանրային հասանելիություն: Պարզաբանման պատասխանի տրամադրման փաստը արձանագրող քաղվածքները ARMEPS համակարգից և gnumner.am կայքից, ինչպես նաև տրամադրված պարզաբանման օրինակը՝ կցվում են:

2. «ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ի կողմից բողոքում նշված այն փաստը, թե ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24 գնման ընթացակարգի 27, 28, 29, 30, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 46, 47, և 48-րդ չափաբաժիններով գնման ենթակա ապրանքատեսակների հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերը կազմված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 22-րդ կետի խախտումով ևս չի համապատասխանում իրականությանը:

Մասնավորապես՝

ա) 27, 28, 29, 30, 37, 38, 40, 41-րդ չափաբաժինների վերաբերյալ «ՄԵԳԻԷԼ» ՍՊ-ընկերության կողմից բողոքում ներկայացված պնդումը, որ նշված չափաբաժինների համար հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանում է «բացառապես Ethicon ֆիրմայի ապրանքատեսակը» իրականությանը չի համապատասխանում: Հրավերի տեխնիկական բնութագրում նշված չափորոշիչներին համապատասխանում են նաև այլ ընկերությունների կողմից արտադրված ապրանքատեսակներ:

բ.) 33, 34, 35, 36, 39, 42, 43, 46, 47 և 48-րդ չափաբաժիններով գնման ենթակա ապրանքատեսակները չեն հանդիսանում առանձին և ինքնուրույն կիրառվող վիրաբուժական գործիքներ: Դրանք հանդիսանում են մեկանգամյա օգտագործման ծախսվող նյութեր (օրինակ ամրակներ) և նախատեսված են ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական հաստատություններում արդեն իսկ առկա բազմակի օգտագործվող վիրաբուժական գործիքների (օրինակ ամրակների տեղադրման գործիքի) աշխատանքը ապահովելու համար և պետք է լիովին համատեղելի լինեն վերջիններիս հետ: Ելնելով վերոգրյալից՝

տեխնիկական բնութագրերում նշված են ոչ թե գնման ենթակա ապրանքատեսակների կոնկրետ անվանումներ, այլ այն գործիքների և սարքավորումների անվանումները որոնց աշխատանքը ապահովելու համար իրականացվում է գնումը, և որոնց հետ մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքատեսակները պետք է լինեն լիարժեք համատեղելի: Տեխնիկական բնութագրերում նշված սարքավորումների վերաբերյալ տեղեկատվության ընդգրկումը հնարավորություն է տալիս հնարավոր մասնակիցներին առանց տարակերպ մեկնաբանությունների հասկանալ ձեռքբերման ենթակա ապրանքատեսակների հատկանիշներն ու ձեռքբերման պայմանները (հիմք՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մաս՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը» և նույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ՝ «պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը»):

Ամփոփելով վերոգրյալը գտնում եմ, որ «ՄԵԳԻԷԼ» ՍՊ ընկերության կողմից ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24 գնման ընթացակարգի վերաբերյալ բողոքում ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը և բողոքի պահանջն անհիմն է:

Առաջարկում եմ «ՄԵԳԻԷԼ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված բողոքը մերժել:»:

Ի լրումն ներկայացված դիրքորոշման՝ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է հետևյալը.

««ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24 գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքի (ծածկագիր՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/97, 27.11.2019թ) քննության վերաբերյալ 02.12.2019թ. տեղի ունեցաց նիստի ընթացքում ստանձնած պարտավորության համաձայն Ձեզ եմ ներկայացնում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24 գնման ընթացակարգի 27, 28, 29 և 30, 37, 38, 40, 41 չափաբաժիններով պահանջված ապրանքատեսակների հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող «Ethicon» ընկերությունից բացի այլ արտադրողների և ապրանքատեսակների մասին տեղեկատվությունը:

27, 28, 29 չափաբաժիններով պահանջված «կիսաներծծվող ցանց» ապրանքատեսակների հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանում են նաև «ErgonEst» ընկերության կողմից արտադրվող «Sorbimesh»

ապրանքատեսակը և «Meril» ընկերության «AbsoMesh» ապրանքատեսակը: 30-րդ չափաբաժնով պահանջված «մաշկի ստեպլեր» ապրանքատեսակի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխանում է նաև «Teleflex» ընկերության կողմից արտադրվող «Visistat-35W» ապրանքատեսակը:

37, 38, 40 և 41-րդ չափաբաժիններով պահանջված «ցիրկուլյար կարող-կտրող գործիք» ապրանքատեսակների հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանում են նաև «FrankenMan» ընկերության «Chex surgical staplers» ապրանքատեսակները և և «Meril» ընկերության «Mirus circular stapler» ապրանքատեսակները:

Առդիր Ձեզ եմ ներկայացնում վերոհիշյալ ընկերությունների կատալոգների էլեկտրոնային տարբերակները:»:

Մեկ այլ գրությամբ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է նաև, որ *«Ձեզ եմ ներկայացնում «ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24 գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքի (ծածկագիր՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/97, 27.11.2019թ) քննության վերաբերյալ 09.12.2019թ. տեղի ունեցած նիստի ընթացքում բողոքաբերի ներկայացուցի կողմից հնչեցրած հարցերի վերաբերյալ հետևյալ պարզաբանումները.*

Չաւիաբաժիններ 27, 28, 29: Արտադրող ErgonEst- Sorbimesh, կատալոգ էջ 11:

1. Չափերի անհամապատասխանության կերաբերվյալ,

Մատակարարը կատալոգում նշում է, որ կարող է մատակարարել ցանակացած չափի ցանց՝ ըստ պատվերի, հետևաբար, կատալոգի աղյուսակում 15x15 սմ չափի բացակայության բողոքաբերի փաստարկն անհիմն է:

2. Ցանցերի անցքերի չափերի անհամապատասխանության վերաբերյալ:

Մրցութային պայմաններով պահանջվում է 3մմ՝ ներառյալ թույլատրելի սահմաններում շեղումները, «Սորբիմեշի» դեպքում այն կազմում է 2 մմ +/- 0,3 մմ, որը հնարավոր շեղման թույլատրելի սահմաններում է: «Աբսոմեշ» ցանցի պարագայում անցքերի չափը կազմում է 2,5 +/-1 մմ, որը լրիվ համապատասխանում է մրցույթային պայմաններին կատալոգ էջ 8

3. Ցանցերի բաղադրության անհամապատասխանության վերաբերյալ

Մրցութային պայմաններով պահանջվում է ներծծվող եվ չներծծվող թելերի քանակային հարաբերություն՝ 50/50, որը չի կարող ընկալվել որպես խտությունների նույնատիպ հարաբերություն, այսինքն դա չի նշանակում, որ գ/մ2 միավորով նրանց

հարաբերակցությունը պետք է ևս լինի 50/50, քանի որ տարբեր թելերն ունեն տարբեր խտություններ եվ հետևաբար տարբեր քաշեր:

4. Ցանցերի առավելագույն ճնշման անհամապատասխանության վերաբերյալ

Մրցութային պայմաններով պահանջվում է «ճնշման առավելագույն դիմադրությունը՝ 450-600 մմ.ս.ս», «Աբսոմեշ» ցանցի պարագայում այն կազմում է հավասար եվ առավել 320 մմ.ս.ս՝ կատալոգ էջ 8, և քանի որ 320 մմ.ս.ս եվ առավելը տեղակայվում է առավելագույնը 450-600 մմ.ս.ս սահմանների մեջ, ապա այն կարողէ համարվել համարժեք:

Չափաբաժին 30: Արտադրողներ Teleflex https://sagemed.ru/wm-search/results,1-20?keyword=528135&limitstart=0&option=com_virtuemart&view=category&virtuemart_category_id=0:

Համապատասխան հղումով երևում է, որ Teleflex ֆիրմայի WK528135 կոդով մաշկային ստեպլերների սեղմակների չափերն են 5,7x3,9 մմ, որն ամբողջությամբ համընկնում է մրցույթային պայմաններին:

37, 38, 40, 41 չափաբաժինների վերաբերյալ նշված չէ կոնկրետ որևէ անհամապատասխանություն, հետևաբար հնարավոր չէ պատասխանել նմանատիպ պնդմանը:

37, 38, 39 չափաբաժինների վերաբերյալ միակ առարկությունն առ այն, որ աչքով նայելիս առանձնացվող գլխիկները տափակեցված չեն անհիմն է եվ չի կարող պատճառ հանդիսանալ անհամապատասխանության վերաբերյալ պնդման համար:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները գտնում եմ, որ նշված արտադրողների արտադրանքները կարող են համարվել համարժեք մրցութային պայմաններին:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/97 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 18.11.2019թ. հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացման նիստի օր է սահմանվել 27.11.2019թ.-ի ժամը 11:00-ը:

Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

Հ/Հ	CPV կոդ	CPV անուն	Անվանում	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
27	33181330/501	վիրաբուժական իմպլանտներ	Ցանց կիսաներծծվող, ճողվածքների համար ախտահանված 15x15 չափերի,	Բաղկացած է 50% պրոլենի 5/0 եվ 50% մոնոկրիլի 6/0 թելերից. Պրոլենը՝ մոնոֆիլամետ, չներծծվող պոլիպրոպիլենից բաղկացած կարանյութ,մոնոկրիլը՝ մոնոֆիլամենտ,ներծծվող (ներծծումը՝90-120 օր) պոլիգլեկապրոն 25-ից բաղկացած կարանյութ: Ցանցի անցքերի չափը՝ 3,ցանցի հաստությունը՝ 0,5մմ, Ճնշման առավելագույն դիմադրությունը՝ 450-600 մմ.ս.ս., չափերը 15x15սմ:Ստերիլ գործարանային փաթեթավորումով:
28	33181330/502	վիրաբուժական իմպլանտներ	Ցանց կիսաներծծվող, ճողվածքների համար ախտահանված 6x11 չափերի,	Բաղկացած է 50% պրոլենի 5/0 եվ 50% մոնոկրիլի 6/0 թելերից. Պրոլենը՝ մոնոֆիլամետ, չներծծվող պոլիպրոպիլենից բաղկացած կարանյութ,մոնոկրիլը՝ մոնոֆիլամենտ,ներծծվող (ներծծումը՝90-120 օր)պոլիգլեկապրոն 25-ից բաղկացած կարանյութ: Ցանցի անցքերի չափը՝ 3,ցանցի հաստությունը՝ 0,5մմ, Ճնշման առավելագույն դիմադրությունը՝ 450-600 մմ.ս.ս., չափերը 6x11սմ: Ստերիլ գործարանային փաթեթավորումով:
29	33181330/503	վիրաբուժական իմպլանտներ	Ցանցկիսաներծծվող, ճողվածքների համար ախտահանված 30x30 չափերի,	Բաղկացած է 50% պրոլենի 5/0 եվ 50% մոնոկրիլի 6/0 թելերից. Պրոլենը՝ մոնոֆիլամետ, չներծծվող պոլիպրոպիլենից բաղկացած կարանյութ, մոնոկրիլը՝ մոնոֆիլամենտ, ներծծվող (ներծծումը՝90-120 օր)պոլիգլեկապրոն 25 -ից բաղկացած կարանյութ: Ցանցի անցքերի չափը՝ 3մմ,ցանցի հաստությունը՝ 0,5մմ, Ճնշման առավելագույն դիմադրությունը՝ 450-600 մմ.ս.ս., չափերը 30x30սմ: Ստերիլ գործարանային փաթեթավորումով:
33	33161120/553	վիրաբուժական գործիքներ	Փոխվող ծայրադիրներ 30մմ,	Մեկ անգամյա օգտագործման պահունակներ TX 30 ապարատների համար: Պետք է ունենա հյուսվածքների սահմանափակիչ:պահունակը լիծքավորված է 11 տիտան-ալյումինում-վանադիումի համաձուլվածքից, սեղմակներով, երկու շարքով, շախմատաձև: Սեղմակի լարի տրամագիծը 0, 27 մմ, ամրակի պսակի լայնությունը 4, 0 մմ, բաց սեղմակի ոտիկի երկարությունը 4, 8 մմ, փակված վիճակում 2, 0 մմ, սեղմակները պետք է լինեն ՄՌS համատեղելի:N12 կամ այլ փաթեթավորմամբ տուփ:
34	33161120/554	վիրաբուժական գործիքներ	Փոխվող ծայրադիրներ 60մմ	Մեկ անգամյա օգտագործման պահունակներ TX 60 ապարատների համար: Պետք է ունենա հյուսվածքների սահմանափակիչ:պահունակը լիցքավորված է 21 տիտան-ալյումինում-վանադիումի համաձուլվածքից, սեղմակներով, երկու շարքով, շախմատաձև: Սեղմակի լարի տրամագիծը 0, 27 մմ, ամրակի պսակի լայնությունը 4, 0 մմ, բաց սեղմակի ոտիկի երկարությունը 4,8 մմ, փակված վիճակում 2,0 մմ,սեղմակները պետք է լինեն ՄՌS համատեղելի:N12 կամ այլ փաթեթավորմամբ տուփ:
35	33161120/555	վիրաբուժական գործիքներ	Փոխվող ծայրադիրներ,դանակով,6 շարք, 3D ֆորմատ	Փոփոխվող ծայրադիր միանվագ օգտագործման 55 մմ, նախատեսված NTLC55 գծային կարող կտրող սարքավորման համար, ունի փակված սեղմակի բարձրության կարգավորման հնարավորություն:Ծայրադիրը պարունակում է ոչ պակաս քան 85 սեղմակ, որոնք դասավորված են երկու եռաշարք շարքերով շախմատային կարգով եվ ունեն հանվող պաշտպանիչ վահանակ:Լարի տրամաչափը ոչ պակաս քան 0,2 մմ,պսակի լայնությունը ոչ ավելի քան 3 մմ,բաց սեղմակի ոտքի բարձրությունը ոչ պակաս քան 4,3 մմ, փակված սեղմակի բարձրությունը ենթակա է կարգավորման, ոչ պակաս քան 1,5 մմ եվ ոչ ավելին քան

				2,0 մմ: Սեղմակների նյութը դա ՄՌՏ համատեղելի տիտանային համաձուլվածք է որը պարունակում է վանադիում եվ ալյումինիում Ti3Al2.5V /տիտան 94,5% ալյումինիում3% վանադիում 2,5%/ որը նվազեցնում է պլաստիկությունը եվ կանխում սեղմակների հետագա ուղղումը:Ծայրադիրը ապահովում սեղմակային կարի առաջացում որի երկարությունը ոչ պակաս քան 60 մմ, կտրվածքի երկարությունը ոչ պակաս քան 55 մմ բայց ոչ ավելի քան 58 մմ.Մեխանիկական կարի երկարությունը գերազանցում է կտրվածքի երկարությունը ոչ պակաս քան 1,5 սեղմակ (4 մմ)Սեղմակները փակվում են եռաչափ սկզբունքով:N12 կամ այլ փաթեթավորմամբ տուփ:
36	33161120/556	վիրաբուժական գործիքներ	Փոխվող ծայրադիրներդանակով,6 շարք, 3D ֆորմատ	Փոփոխվող ծայրադիր միանվագ օգտագործման 75 մմ նախատեսված NTLC75 գծային կարող կտրող սարքավորման համար, ունի փակված սեղմակի բարձրության կարգավորման հնարավորություն:Ծայրադիրը պարունակում է ոչ պակաս քան 115 սեղմակ, որոնք դասավորված են երկու եռաշարք շարքերով շախմատային կարգով եվ ունեն հանվող պաշտպանիչ վահանակ:Լարի տրամաչափը ոչ պակաս քան 0,23 մմ,պսակի լայնությունը ոչ ավելի քան 3 մմ,բաց սեղմակի ոտքի բարձրությունը ոչ պակաս քան 4,3 մմ, փակված սեղմակի բարձրությունը ենթակա է կարգավորման, ոչ պակաս քան 1,5 մմ եվ ոչ ավելին քան 2,0 մմ:Սեղմակների նյութը դա ՄՌՏ համատեղելի տիտանային համաձուլվածք է որը պարունակում է վանադիում եվ ալյումինիում Ti3Al2.5V /տիտան 94,5% ալյումինիում3% վանադիում 2,5%/ որը նվազեցնում է պլաստիկությունը եվ կանխում սեղմակների հետագա ուղղումը: Ծայրադիրը ապահովում սեղմակային կարի առաջացում որի երկարությունը ոչ պակաս քան 80 մմ, կտրվածքի երկարությունը ոչ պակաս քան 75 մմ բայց ոչ ավելի քան 78 մմ.Մեխանիկական կարի երկարությունը գերազանցում է կտրվածքի երկարությունը ոչ պակաս քան 1,5 սեղմակ (4 մմ) Սայրը գտնվում է երկու եռակի սեղմակների շարքերի միջեվ, սայրը բաղկացած է բժշկական պողպատից ոչ պակաս քան 400- սերիայի եվ գտնվում է ծայրադիրի մեջ:Ծայրադիրի մեջ գտնվում է կարել/կտրելու մեխանիզմի արգելափակման համակարգ որը գործում է երբ որ ծայրադիրը օգտագործված է լինում:Սեղմակները փակվում են եռաչափ սկզբունքով: Նախատեսված է միանվագ օգտագործման համար, ենթակա չէ կրկնակի ախտահանման: Մատակարարվում է լիցքավորված, ստերիլ ունի հանվող կանխարգելիչ վահանակ որը գտնվում է աշխատանքային մակերեսի վրա: N12 կամ այլ փաթեթավորմամբ տուփ:
39	33161120/559	վիրաբուժական գործիքներ	Փոխվող ծայրադիրներ TLC 75 կարող-կտրող գործիքի համար	Մեկ անգամյա օգտագործման պահունակներ TLC 75 ապարատի համար, նորմալ հյուվածքների համար :Պահունակը պետք է ունենա սայրի համար նախատեսված ուղի , կոճակներ, հյուսվածքները ֆիկսելու համար, ներկառուցված սայրի արգելակման մեխանիզմ : Պահունակը, պարունակում է 76 տիտան-ալյումինում-վանադիումի համաձուլվածքից Ti3Al2.5V /տիտան 94,5% ալյումինիում3% վանադիում 2,5%/ սեղմակներ, տեղադրված շախմատաձև երկու շարքով, պահունակը պետք է ունենա կանխարգելիչ շերթ: Սեղմակի լարի տրամագիծը 0, 2 մմ, ամրակի պսակի լայնությունը 3, 0 մմ, բաց սեղմակի ոտիկի երկարությունը 3,85 մմ, փակված վիճակում 1,5 մմ: Պահունակը ապահովում է 77 մմ կար . Կարի երկարությունը երկար է կտրվածքի երկարությունից 4 մմ,սեղմակները պետք է լինեն ՄՌՏ համատեղելի: N12 կամ այլ համարժեք քանակի ստերիլ գործարանային փաթեթավորումով

42	33161120/562	վիրաբուժական գործիքներ	Գծային կարող ապարատ 75 մմ կտրվածքով	Գծային կարող կտրող սարքավորում 75 մմ փակված սեղմակի բարձրության կարգավորման հնարավորությամբ:Բաղկացած է պասիվ եվ ծայրադիրային կեսերից, որը փակվում է փակող լծակի միջոցով:Հնարավորություն կա ստանալ երեք տեսակի փակված սեղմակի բարձրություն, նորմալ հաստության հյուսվածքների համար, հաստացած հյուսվածքների եվ հաստ հյուսվածքների համար:Հիմնական սեղմակի վրա գտնվող փոսիկների տեսքը ապահովում է սեղմակների եռաչափ փակումը որը ապահովում է առավել համաչափ կոմպրեսիա:Ծայրադիրային հենակի կառուցվածքը բացառում է ծայրադիրի ոչ ճիշտ տեղադրումը:Հենակներից մեկի վրա գտնվում է փակված սեղմակի բարձրության կարգավորման մեխանիզմը:Կարելու մեխանիզմը հնարավորություն է տալիս կարել սարքավորման երկու ուղղություններով:Հենման մակերեսները պատված են հատուկ հակասայթաքիչ ծածկույթով:Կարի դիստալ սահմանը գերազանցում է կտրման գիծը ոչ պակաս քան 1,5 սեղմակ (4 մմ).Սարքը կարող է վերալիցքավորվել ոչ պակաս քան 12 անգամ ունիվերսալ ծայրադիրներով որոնք նախատեսված 75 մմ սարքի համար:Համատեղելի է SR 75 քարթրիջների հետ:Նախատեսված են մեկ հիվանդի մոտ օգտագործման համար, մատակարարվում են չլիցքավորված, ստերիլ,առանց քարթրիջի:
43	33161120/563	վիրաբուժական գործիքներ	Գծային կարող ապարատ 55 մմ կտրվածքով	Գծային կարող կտրող սարքավորում 55 մմ փակված սեղմակի բարձրության կարգավորման հնարավորությամբ:Բաղկացած է պասիվ եվ ծայրադիրային կեսերից, որը փակվում է փակող լծակի միջոցով:Հնարավորություն կա ստանալ երեք տեսակի փակված սեղմակի բարձրություն, նորմալ հաստության հյուսվածքների համար, հաստացած հյուսվածքների եվ հաստ հյուսվածքների համար:Հիմնական սեղմակի վրա գտնվող փոսիկների տեսքը ապահովում է սեղմակների եռաչափ փակումը որը ապահովում է առավել համաչափ կոմպրեսիա:Ծայրադիրային հենակի կառուցվածքը բացառում է ծայրադիրի ոչ ճիշտ տեղադրումը:Հենակներից մեկի վրա գտնվում է փակված սեղմակի բարձրության կարգավորման մեխանիզմը:Կարելու մեխանիզմը հնարավորություն է տալիս կարել սարքավորման երկու ուղղություններով:Հենման մակերեսները պատված են հատուկ հակասայթաքիչ ծածկույթով:Կարի դիստալ սահմանը գերազանցում է կտրման գիծը ոչ պակաս քան 1,5 սեղմակ (4 մմ).Սարքը կարող է վերալիցքավորվել ոչ պակաս քան 12 անգամ ունիվերսալ ծայրադիրներով որոնք նախատեսված 55 մմ սարքի համար:Համատեղելի է SR 55 քարթրիջների հետ:Նախատեսված են մեկ հիվանդի մոտ օգտագործման համար, մատակարարվում են չլիցքավորված, ստերիլ,առանց քարթրիջի:
46	33161120/566	վիրաբուժական գործիքներ	Փոփոխվող քարթրիջներ սեղմակներով (1,8 մմ)«Էշելոն» 45 գործիքի համար	Փոփոխվող քարթրիջներ Էթիկոն ֆիրմայի «Էշելոն» 45 գծային կարող կտրող գործիքի համար,միանվագ,հաստացած հյուսվածքներ կարելու համար:Սեղմակային կարի փակ սեղմակի բարձրությունը 1,8 մմ:Երկու եռաշար սեղմակների միջև առկա է ակոս սայրի համար:Ներկառուցված մեխանիզմ որը արգելափակում է սայրը օգտագործված քարթրիջ տեղադրելու դեպքում:Քարթրիջը պարունակում է 70 սեղմակ տիտանային համաձուլվածքից, որոնք տեղակայված են երկու եռաշարքով շախմատաձև:Բաց սեղմակի ոտիկի բարձրությունը 3,8մմ, սեղմակային կարի երկարությունը մոտավորապես 45 մմ:Մեխանիկական կարի երկարությունը գերազանցում է կտրվածքի երկարությանը առնվազն 1,5 սեղմակ կախված հյուսվածքի հաստությունից:Մատակարարվում է լիցքավորված և ստերիլ:Աշխատանքային մակերեսի վրա առկա է պաշտպանիչ վահանակ որը կանխում է

				սեղմակների տեղաշարժը տեղափոխման կամ տեղադրման ժամանակ:Սեղմակների հումքը ՄՌՏ համատեղելի տիտանային համաձուլվածք Ti3Al2.5V /տիտան 94,5% ալյումինիում3% վանադիում 2,5%/ որը ապահովում է պլաստիկության նվազում և կանխում է սեղմակների հակադարձ բացումը:Ունենա գունային մակնշում, մատակարարվում են ստերիլ նախատեսված են միանվագ օգռագործման համար: N12 կամ այլ քանակի ստերիլ գործարանային փաթեթավորումով
47	33161120/567	վիրաբուժական գործիքներ	Փոփոխվող քարթրիջներ սեղմակներով (1,5 մմ)«Էշելոն» 45 գործիքի համար	Փոփոխվող քարթրիջներ Էթիկոն ֆիրմայի «Էշելոն» 45 գծային կարող կտրող գործիքի համար,միանվագ, նորմալլ հաստության հյուսվածքներ կարելու համար:Սեղմակային կարի փակ սեղմակի բարձրությունը 1,5 մմ:Երկու եռաշար սեղմակների միջև առկա է ակոս սայրի համար:Ներկառուցված մեխանիզմ որը արգելափակում է սայրը օգտագործված քարթրիջ տեղադրելու դեպքում:Քարթրիջը պարունակում է 70 սեղմակ տիտանային համաձուլվածքից, որոնք տեղակայված են երկու եռաշարքով շախմատաձև:Բաց սեղմակի ոտիկի բարձրությունը 3,5 մմ, սեղմակային կարի երկարությունը մոտավորապես 45 մմ:Մեխանիկական կարի երկարությունը գերազանցում է կտրվածքի երկարությանը առնվազն 1,5 սեղմակ կախված հյուսվածքի հաստությունից:Մատակարարվում է լիցքավորված և ստերիլ:Աշխատանքային մակերեսի վրա առկա է պաշտպանիչ վահանակ որը կանխում է սեղմակների տեղաշարժը տեղափոխման կամ տեղադրման ժամանակ:Սեղմակների հումքը ՄՌՏ համատեղելի տիտանային համաձուլվածք Ti3Al2.5V /տիտան 94,5% ալյումինիում3% վանադիում 2,5%/ որը ապահովում է պլաստիկության նվազում և կանխում է սեղմակների հակադարձ բացումը:Ունենա գունային մակնշում, մատակարարվում են ստերիլ նախատեսված են միանվագ օգտագործման համար:Տուփում 12 հատ այլ համարժեք քանակի: Ստերիլ գործարանային փաթեթավորումով
48	33161120/568	վիրաբուժական գործիքներ	Փոխարինվող կասետներ «Էշելոն» 60 գործիքի համար 2,0մմ կամ 1,5մմ	Քարթրիջ փոխարինվող, սեղմակներով միանվագ օգտագործման որոնք նախատեսված են Էթիկոն ֆիրմայի «Էշելոն» 60 գծային կարող կտրող գործիքի համար, նորմալ կամ հաստ հյուսվածքները կարելու համար, ձևավորում է սեղմակային կար, որոնց բարձրությունը փակ վիճակում կազմում է 1,5 մմ կամ 2,0 մմ: Քարթրիջը մեջ առկա է ակոս երկու եռաշարքերի միջև, ներկառուցված, օգտագործված քարթրիջի դեպքում, սայրը արգելափակող մեխանիզմ: Քարթրիջը պարունակում է 88 հատ տիտանային համաձուլվածքից/90%տիտան 6% ալյումի 4% վանադիում/ սեղմակներ,դասավորված շախմատաձև, երկու եռաշարքով:Բաց սեղմակի ոտիկի բարձրությունը 3,5 մմ կամ 4,1 մմ,փակ սեղմակի բարձրությունը1,5 մմ:Քարթրիջը հնարավորություն է տալիս սեղմակային կարի տեղադրում, որի երկարությունը կազմում է 60 մմ:Մեխանիկական կարը գերազանցում է կտրվածքի երկարությունը 1,5 սեղմակով: Յուրաքնչյուր եռաշարք կարի դիստալ շարքը պարունակում երկուական սեղմակ: Մատակարարվում են լիցքավորված,ստերիլ, շարժական կարմիր գույնի պաշտպանիչ վահանակով որը տեղակայված է քարթրիջի աշխատանքային մակերեսի վրա, 12 հատ յուրաքնչյուր փաթեթում:Գունային մակնշում:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 27.11.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակի, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց

ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները պետք է հնարավորություն տան մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովեն մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով թիվ 27-րդ, 28-րդ, 29-րդ և 30-րդ չափաբաժինների մասով սահմանված պահանջները չեն ապահովում մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը, սահմանափակում են ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը, հիմնված չեն գնման գործընթացի մրցակցային, համաչափ, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, որն էլ առաջացրել է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների:

Այսպես՝ Բողոքաբեր Ընկերության կողմից ներկայացված այն փաստերի վերաբերյալ, ըստ որոնց՝

1. 27-29 չափաբաժիններով պահանջվող ապրանքի «50% պրոլենի 5/0 և 50% մոնոկրիլի 6/0 թելերից» բաղկացած լինելու պահանջի «50-50» հարաբերակցությունը ապահովում է բացառապես Ethicon ֆիրմայի ապրանքատեսակը,

2. 30-րդ չափաբաժնով պահանջվող ապրանքը արտադրում է բացառապես Ethicon ֆիրման,

Պատվիրատուի կողմից, ներկայացված բողոքի դիրքորոշմամբ և ներկայացված փաստերով չի ապացուցել հակառակը:

Պատվիրատուն ներկայացրել է, որ 27-րդ, 28-րդ, 29-րդ չափաբաժիններով պահանջված «կիսաներծծվող ցանց» ապրանքատեսակների հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանում են նաև «ErgonEst» ընկերության կողմից արտադրվող «Sorbimesh» ապրանքատեսակը և «Meril» ընկերության «AbsoMesh» ապրանքատեսակը: 30-րդ չափաբաժնով պահանջված «մաշկի ստեպլեր» ապրանքատեսակի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխանում է նաև «Teleflex» ընկերության կողմից արտադրվող «Visistat-35W» ապրանքատեսակը:

Ինչպես նաև հավելելով հայտնել է, որ Մրցութային պայմաններով պահանջվում է 3մմ՝ ներառյալ թույլատրելի սահմաններում շեղումները, «Սորբիմեշի» դեպքում այն կազմում է 2 մմ +/- 0,3 մմ, որը հնարավոր շեղման թույլատրելի սահմաններում է: «Աբսոմեշ» ցանցի

պարագայում անցքերի չափը կազմում է 2,5 +/-1 մմ, որը լրիվ համապատասխանում է մրցույթային պայմաններին, իսկ 30-րդ չափաբաժնով նշելով Teleflex ֆիրմային արտադրողի https://sagemed.ru/wm-search/results,1-20?keyword=528135&limitstart=0&option=com_virtuemart&view=category&virtuemart_category_id=0 համապատասխան հղումը, փաստել է, որ Teleflex ֆիրմայի WK528135 կոդով մաշկային ստեպլերների սեղմակների չափերն են 5,7x3,9 մմ, որն ամբողջությամբ համընկնում է մրցույթային պայմաններին:

Վերոնշյալների հետ կապված Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ 27-րդ, 28-րդ, 29-րդ չափաբաժիններով թույլատրելի սահմաններում շեղումները հրավերով չեն սահմանվել, ուստի Պատվիրատու կողմից առաջարկված «ErgonEst» ընկերության կողմից արտադրվող «Sorbimesh» և «Meril» ընկերության «AbsoMesh» ապրանքատեսակները չեն կարող հանդիսանալ որպես այլընտրանք:

30-րդ չափաբաժնով որպես այլընտրանք ներկայացված Teleflex ֆիրմային արտադրողի WK528135 կոդով ապրանքատեսակը նույնպես չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, քանի որ «Teleflex» ընկերության կողմից արտադրվող «Visistat-35W» ապրանքատեսակը ոչ թե պարունակում է WK528135 կոդը, այլ՝ WK528235: WK528135 կոդով ապրանքատեսակը համապատասխանում է «Teleflex» ընկերության կողմից արտադրվող «Visistat-35R» ապրանքատեսակին, որը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին: Նշվածը հստակ երևում է https://sagemed.ru/wm-search/results,1-20?keyword=528135&limitstart=0&option=com_virtuemart&view=category&virtuemart_category_id=0 համապատասխան հղումում առկա ապրանքի նկարից (zoom կատարելու միջոցով):

Վերոնշյալներով պայմանավորված, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով թիվ 27-րդ, 28-րդ, 29-րդ և 30-րդ չափաբաժինների մասով սահմանված պայմաններն ու պահանջները վերաբերում են միայն մեկ արտադրող ընկերության անվանումներին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից բողոքով թիվ 27-րդ, 28-րդ, 29-րդ և 30-

րդ չափաբաժինների մասով բերված փաստերն ու հանգամանքները հիմնավոր են, իսկ գնման ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներն այդ չափաբաժինների մասով անհիմն են և սահմանափակում են հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքները:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թիվ 27-րդ, 28-րդ, 29-րդ և 30-րդ չափաբաժինների մասով թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ընթացակարգն այդ մասով պետք է հայտարարել չկայացած:

Անդրադառնալով Բողոքով ներկայացված մյուս չափաբաժիններին իրավաչափությանը, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

37-րդ, 38-րդ, 40-րդ և 41-րդ չափաբաժինների վերաբերյալ Պատվիրատուի կողմից գործի քննության ընթացքում ներկայացվեցին համապատասխան ապացույցներ, առ այն, որ պահանջված «ցիրկուլյար կարող-կտրող գործիք» ապրանքատեսակների հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանում են նաև «FrankenMan» ընկերության «Chex surgical staplers» ապրանքատեսակները և և «Meril» ընկերության «Mirus circular stapler» ապրանքատեսակները:

33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 39-րդ, 42-րդ, 43-րդ, 46-րդ, 47-րդ և 48-րդ չափաբաժիններով մասով, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի ուսումնասիրության արդյունքում, պարզ է, որ գնման ենթակա ապրանքատեսակները չեն հանդիսանում առանձին և ինքնուրույն կիրառվող վիրաբուժական գործիքներ: Դրանք նախատեսված են TX 30, TX 60, ապարատների համար, NTLC55, NTLC75 գծային կարող կտրող սարքավորման համար, TLC 75 ապարատի համար: Այլ կերպ ասած՝ տեխնիկական բնութագրերում նշված են ոչ թե գնման ենթակա ապրանքատեսակների կոնկրետ անվանումներ, այլ այն գործիքների և սարքավորումների անվանումները, որոնց աշխատանքն ապահովելու համար է իրականացվում գնումը, և որոնց հետ մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքատեսակները պետք է լինեն լիարժեք համատեղելի:

Ուստի, ելնելով վերագրյալներից, Բողոքներ քննող անձը գտնում է, որ բողոքով ներկայացված թիվ 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 46-րդ, 47-րդ, 48-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը չկայացած համարելու պահանջն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 27.11.2019թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/97 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը՝ թիվ 27-րդ, 28-րդ, 29-րդ և 30-րդ չափաբաժինների մասով:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**